

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 16/2

3 ապրիլի 2013թ.

Քննարկվեց <Սթոունեյջ> ՍՊԸ գրությամբ բերված գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Աշտարակի ՏՀՏ 01.03.2013թ-ի թիվ 1008292 ստուգման ակտի դեմ:

Համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 14.12.2012թ. թիվ 1008292 հանձնարարագրի ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում <Սթոունեյջ> ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում 01.03.2013թ-ին կազմվել է թիվ 1008292 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 6.253.382 դրամ:

Ընկերության գանգատը վերաբերվում է ստուգման ակտով բնօգտագործման վճարի գծով լրացուցիչ առաջադրված պարտավորությանը: Ստուգման ակտի 11-րդ կետով մասնավորապես արձանագրվել է.

Բնապահպանական և բնօգտագործման հաշվարկ-հաշվետվությունների և 16.06.2008-19.10.2010թ.թ. ընկած ժամանակաշրջանում կատարված մակշեյդերական չափագրման արդյունքների համադրումից պարզվեց, որ հաշվետվություններում պակաս օգտակար հանածոյի մարված պաշար էր ցույց տրվել 1758 խ.մ. (7500-5541.4), որի հետևանքով <Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին> ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, ստուգվող ժամանակահատվածի յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի հաշվով պակաս ցույց տրված ծավալը կազմում է 244.8 խ.մ., նույն հոդվածի 2-րդ կետի <բ> ենթակետի համաձայն, գերազանցող մասի համար կիրառելով օրենքի 7-րդ հոդվածով սահմանված դրույքաչափերի հնգապատիկ մեծությունը, պակաս հաշվարկված և ցույց տրված բնօգտագործման վճարը կկազմի 2.567.330 դրամ:

Միաժամանակ 19.10.2010-24.07.2010թ.թ. ընկած ժամանակահատվածում կատարված մակշեյդերական չափագրման արդյունքների համադրումից պարզվեց, որ հաշվետվություններում պակաս օգտակար հանածոյի մարված պաշար էր ցույց տրվել 189 խ.մ. (5775 խ.մ.-5586 խ.մ.), կամ յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի հաշվով պակաս ցույց տրված ծավալը կազմում է 37.8 խ.մ., որի նկատմամբ վերը նշված կարգով կիրառելով դրույքաչափերի հնգապատիկ մեծությունը, պակաս հաշվարկված բնօգտագործման վճարը կազմում է 244709 դրամ: Ընդամենը պակաս է հաշվարկվել բնօգտագործման վճար՝ գումարով 2.812.039 դրամ:

Հիմք ընդունելով <Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ և 6-րդ կետերի դրույթները բնօգտագործման վճարի գծով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 6.253.382 դրամ:

<Սթոունեյջ> ՍՊԸ գանգատում մասնավորապես նշված է.

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 14.12.2012թ. թիվ 1008292 հանձնարարագրի համաձայն 2013թ. հունվարի 25-ից մինչև փետրվարի 15-ը <Աթոունեյջ> ՍՊԸ-ում Աշտարակի ՏՀՏ կողմից կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգում, որի արդյունքում 01.03.2013թ. կազմված թիվ 1008292 ակտով ընկերությանը ներկայացվել է բյուջե վճարման 6.253.382 դրամ բնօգտագործման վճար:

Ստուգմամբ հայտնաբերվել է բնապահպանական պետական տեսչության ակտերով արձանագրված և ընկերության կողմից հարկային տեսչություն ներկայացված հաշվարկ-հաշվետվություններում արտացոլված օգտակար հանածոյի մարված պաշարի դրական տարբերություն:

Դրական տարբերության համար բնօգտագործման վճարը ստուգող աշխատակիցների կողմից հաշվարկվել է մեզ համար անհասկանալի դրույքաչափերով, այնինչ ՀՀ կառավարության 30.12.1998թ. թիվ 864 որոշման 2-րդ կետի 4-րդ պարբերությունը սահմանում է, որ «բնօգտագործման վճարի օբյեկտ համարվող ծավալների չափաքանակների որոշման նպատակով ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով իրականացված ստուգումների արդյունքում արձանագրված բնօգտագործման փաստացի ծավալների և վճարողների կողմից հարկային և լիազոր մարմիններ ներկայացված՝ ստուգվող ժամանակահատվածում հաշվարկ-հաշվետվություններում արտացոլված ծավալների դրական տարբերության համար օրենքով սահմանված պատասխանատվության միջոցների հաշվարկման ժամանակ» բնօգտագործման վճարի հաշվարկման համար հիմք է հանդիսանում նույն որոշման IV գլխի 2-րդ կետով սահմանված հաստատագրված դրույքաչափը: <Սթոունեյջ> ՍՊԸ-ին պատկանող Հացաշենի տուֆի հանքավայրի համար այն կազմում է 100 դրամ 1 խ.մ. մարված պաշարների համար (24.10.2005թ. կնքված հանքարդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ 226 լիցենզային պայմանագրի համաձայն, ուղիղ և կոպիտ կտրվածքի քարի միջին ելքը կազմում է 38%): Հետևաբար, ստուգման ակտի 11-րդ կետով հաշվարկված բյուջե վճարման ենթակա բնօգտագործման վճարի գումարը կկազմի ոչ թե 2.812.039 դրամ, այլ 1.111.500 դրամ, օրենքով սահմանված 50% տուգանքը՝ 555.750 դրամ, տույժը՝ 794.612 դրամ, ընդամենը՝ 2.461.844 դրամ:

Ելնելով վերոգրյալից ընկերությունը խնդրում է հարկային մարմնի կողմից 01.03.2013թ. թիվ 1008292 ակտով հաշվարկված բյուջե վճարման ենթակա 6.253.382 դրամից հանել ավել հաշվարկված 3.791.538 դրամը, թողնելով վճարման 2.461.862 դրամ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով <Սթոունեյջ> ՍՊԸ տնօրենի և ստուգման ակտը կազմած պաշտոնատար անձանց ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

ՀՀ կառավարության 30.12.1998թ. «Բնօգտագործման վճարի դրույքաչափերի մասին» թիվ 864 որոշման 2-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ պինդ օգտակար հանածոների (բացառությամբ աղի) մարված պաշարների համար վճարը հաշվարկվում է նույն կետով սահմանված 2-րդ բանաձևով (նույն որոշմամբ հաստատված բնօգտագործման վճարի դրույքաչափերի <IV. Պինդ օգտակար հանածոների մարված պաշարների համար վճարի հաստատագրված դրույքաչափերը> բաժնով սահմանված հաստատագրված դրույքաչափերի հիման վրա), մասնավորապես՝ բնօգտագործման վճարի օբյեկտ համարվող ծավալների չափաքանակների որոշման նպատակով «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով իրականացված ստուգումների արդյունքում արձանագրված բնօգտագործման փաստացի ծավալների և վճարողների կողմից հարկային և լիազոր մարմիններ ներկայացված՝ ստուգվող ժամանակահատվածում հաշվարկ-հաշվետվություններում արտացոլված ծավալների դրական տարբերության համար օրենքով սահմանված պատասխանատվության միջոցների հաշվարկման ժամանակ: Նույն որոշմամբ հաստատված բնօգտագործման վճարի դրույքաչափերի <IV. Պինդ օգտակար հանածոների մարված պաշարների համար վճարի հաստատագրված դրույքաչափերը> բաժնով տուֆի շինաքարի մարված պաշարների համար (մարված պաշարից շինաքարի 30-40 տոկոս ելի դեպքում) հաստատագրված դրույքաչափը սահմանված է յուրաքանչյուր խորանարդ մետրի համար 100 դրամ: ՀՀ կառավարության 29.12.2011թ. N 1928-Ն որոշմամբ (ուժի մեջ է մտել 18.02.2012թ.) վերոնշյալ դրույքաչափը սահմանվել է 300 դրամ:

Միաժամանակ, 01.01.2012թ.-ից սկսած «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ ոչ մետաղական պինդ օգտակար հանածոների (բացառությամբ աղի) մարված պաշարների համար բնօգտագործման վճարը հաշվարկվում է ՀՀ կառավարության կողմից սահմանված հաստատագրված դրույքաչափի և հաշվետու ժամանակաշրջանում օգտակար հանածոների

մարված պաշարների ծավալների բազմապատկումով, մասնավորապես՝ բնօգտագործման վճարի օբյեկտ համարվող ծավալների չափաքանակների որոշման նպատակով <<այաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին>> ՀՀ օրենքով սահմանված կարգով իրականացված ստուգումների արդյունքում արձանագրված բնօգտագործման փաստացի ծավալների և վճարողների կողմից հարկային և լիազոր մարմիններ ներկայացված՝ ստուգվող ժամանակահատվածում հաշվարկ-հաշվետվություններում արտացոլված ծավալների դրական տարբերության համար օրենքով սահմանված պատասխանատվության միջոցների հաշվարկման ժամանակ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հանձնաժողովը գտնում է, որ ընկերության գանգատը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <<Հարկային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

ՀՀ ԿԱ ՊԵԿ Աշտարակի ՏՀՏ 01.03.2013թ-ի թիվ 1008292 ստուգման ակտի 11-րդ կետից նվազեցնել ընդամենը 3.791.520 դրամ, այդ թվում՝ բնօգտագործման վճար 1.700.539 դրամ, տույժ 1.240.711 դրամ, տուգանք 850.270 դրամ:

Հանձնաժողովի նախագահ՝



S.ԲԱՐՍԵՂՅԱՆ